

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԸ

Քրիստոսի Յարութիւնը յաղթանակի եւ վերածնունդի տօնն է:

Մինչ Ծնունդը կ'աւետէ փրկչին մարդեղութիւնը, Ջատիկը փրկագործութեան լրումը կը հռչակէ :

Ծնունդը սկզբնաւորութիւնն է մեր փրկութեան : Այդ օրերուն, բացի հովիւներէն եւ մոգերէն ոչ ոք իմացաւ մարդկութեան մեծագոյն դէպքին իրագործումը : Երեսուն տարի ետք միայն մարդեղացած Աստուածը սկսաւ յայտնել ինքզինքը, հռչակելով իր նոր վարդապետութիւնը, աշակերտներ հաւաքելով, հրաշքներ գործելով, ապա հալածանքի ու մահուան ենթարկուելով, մինչեւ որ խաչին վրայէն աղաղակէր թէ "ամէն ինչ աւարտած է", այսինքն իրագործուած է նպատակը որո՞ւ համար եկած էր աշխարհ :

Խաչը Քրիստոսի սիրոյն գագաթնակէտն է, զոհաբերումի գերագոյն չափանիշը: "Չկայ աւելի մեծ սէր քան իր կեանքը տալ իր սիրելիներուն համար", ըսած էր ան :

Բայց այս ամէնը ոչ մի արժէք ու հետեւանք պիտի ունենային եթէ չգար վերջին հանգրուանը Քրիստոսի երկրաւոր կեանքին. յարութիւնը : Անոր վրայ՝ հիմնուած էր իր վարդապետութիւնը, եւ անկի'ց կ'առնէր իր ուժն ու հաւատալիութիւնը :

Պօղոս առաքեալ շատ յստակ ու ուժգին կերպով կը բացայայտէ այս իրողութիւնը. ի'նչ բանի պիտի ծառայէր մեր հաւատքը, ինչի' վրայ պիտի հիմնուէր մեր յոյսը, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար:

Արդարեւ, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, իր գործերը, խօսքերը, ամբողջ կեանքը ոչինչի պիտի վերածուէին, որովհետեւ ի'նքն իսկ դրած էր իբր պայման ու երաշխիք իր խօսքին ճշմարտութեան՝ իր յարութիւնը: Քանիցս յատարարած էր թէ ինք պիտի չարչարուի ու մեռնի, բայց վերստին կեանք պիտի առնէ, եւ այդ՝ ի'ր իսկ կամքովն ու զօրութեամբը:

Ասոր համար Պօղոս կը համարձակի ըսել թէ ամուլ է մեր հաւատքը, իմաստէ զուրկ է մեր քարոզածը, եւ թէ մենք զմեզ խաբած կ'ըլլանք եւ ուրիշները՝ եթէ Քրիստոս յարութիւն չէ առած: Ձեռով մը կ'ուզէ ըսել իր հետեւորդներուն. "Եթէ չէք ընդունիր թէ Յիսուս յարութիւն առած է, աւելի լաւ է հրաժարիք քրիստոնէայ ըլլալէ":

Հետեւողական ըլլալու համար մենք մեզի հետ, պէտք է հարց տանք. Կարելի' է հաւատալ Աստուծոյ եւ մերժել Քրիստոսի յարութիւնը: Անհետեթ պիտի ըլլար նման բան, որովհետեւ մենք մեզի պիտի հակասէինք՝ կասկածելով թէ այն որ էակները ոչինչէն կեանքի կոչած է, կարող է նաեւ մահէ'ն կեանքի կոչելու զանոնք:

Բայց կան մարդիկ որ, հետզհետէ աւելի զարգացող այս դարուն մէջ, աւելի քննադատ կը դառնան եւ կը պահանջեն որ Քրիստոսի յարութեան ալ աստեղ տրուին, ապա թէ ոչ ան կը մնայ անեղծուած եւ կը դասուի առասպելներու շարքին:

Քրիստոնէայ հաւատքը երբեք չէ դաւանած եւ ուսուցած թէ յարութիւնը գիտական գիտելիքներու մաս կը կազմէ: Եկեղեցին հաւատք կը հռչակէ, ոչ թէ գիտութիւն : Սակայն ատով բնաւ չի նուազիր իր հեղինակութիւնը, ոչ ալ կը խախտին իր ուսուցման հիմքերը :

Արդարեւ, գիտութիւն եւ հաւատք տարբեր մարզի, տարբեր մակարդակի արժէքներ են: Մինչ գիտութիւնը շօշափելի, նիւթական տարրերու վրայ կը հիմնաւորէ իր հաստատածը, հաւատքը վստահելի եւ հաւատալի էակներու վկայութենէն կ'առնէ իր ուժը: Գիտութեան հաստատածը, երբ լուրջ աստերու վրայ կառուցուած է, ոչ ոք կրնայ մերժել, հաւատքի դաւանածը միշտ կարելի է մերժել երբ զայն դաւանողի պարկեշտութիւնը, ճշմարտախօսութիւնը առարկելի է:

Գիտութեան տուեալներուն հաւատալով արժանիք չենք շահիր, որովհետեւ ստիպուած ենք ընդունիլ զանոնք, ուզենք կամ չուզենք, իսկ հաւատքին մեր հաւանութիւնը տալով՝ այո՛,

որովհետև կամովին կը ճանչնանք թե՛ զայն մեզի հաղորդողը պարկեշտ ու ճշմարտասու է, եւ այսպէս կ'արժանանանք անոր բարեկամութեան եւ, հոգեւոր մարզի մէջ՝ համապատասխան վարձատրութեան:

Գալով Քրիստոսի յարութեան, որո՞ւ վկայութիւնն է որ մեզի ապահովութիւն կու տայ թէ ստոյգ եղելութիւն է: Քրիստոս ի՛նքը, նախ: Բազմաթիւ անգամներ ըսաւ թէ՛ Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը, մահուան պիտի դատապարտուի, պիտի խաչուի, բայց երեք օր ետք յարութիւն պիտի առնէ՞:

Կը բաւէ՞ այս չափ մեզ հաւատքի մղելու համար:

Այո՛, մէկ պայմանով. կը հաւատա՞նք թէ ոչ Քրիստոսի աստուածութեան: Եթէ այո՛ չունինք ուրիշ ելք եթէ ոչ՝ հաւատալ նաեւ անոր յարութեան: Անհաւատը անկարող է հաւատալու Քրիստոսի յարութեան:

Ապա՛ առաքեալներու վկայութիւնը: Ո՛չ խօսքով միայն, այլ արեան հեղումով: Ո՞վ իր կեանքը կը զոհէ ցնորքի կամ երեսակայական դէպքի համար: Ի՞նչ շահ ունէին անոնք մեռելալի մը յարութեան մասին վկայելով, մանաւանդ շրջապատի մը դիմաց որ կիրքով ու ատելութեամբ վառուած, առիթի կը սպասէին հարուածելու համար զանոնք: Այո՛, վարձատրուեցան անոնք, բայց ինչո՞վ. գերագոյն սիրոյ պարգեւով, նահատակութեամբ:

Յարութիւնը, յաղթանակի տօն, տօնն է նաեւ յոյսի: Յոյս՝ որ ապահովութիւն կը ներշնչէ թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք: Հաւատքի մաս է այս մեզի համար: Հաւատք՝ որ համոզում գոյացուցած է մեր մէջ թէ Քրիստոս, ո՛չ միայն ի՛նքը յարութիւն առաւ, այլ երաշխաւորեց մե՛ր եւս, սե ակա՛ն յարութիւնը: Կա՞յ ասկից աւելի կազդորիչ ու մխիթարական տեսլական՝ մեր այս անցաւոր ու խա ուսիկ գոյութիւնը իմաստաւորելու եւ արժեւորելու համար:

Այո՛. եթէ յարեա՛լ Քրիստոս, մե՛նք եւս իրեն հետ պիտի յառնենք :

Ա՛յս է մեր համոզումն ու հաւատքը :

Մանուէլ Եպս. Պաթագեան

The Feast of Triumph and Revival

The resurrection of Christ is the feast of triumph and revival.

While Christmas announces the Incarnation of the Savior, Easter proclaims the fulfillment of the Redemption.

Christmas is the beginning of our salvation. In those days, nobody, apart of the pastors and magi, knew about the happening of the greatest event of humanity. Only thirty years later the incarnated God began to reveal Himself, proclaiming His new doctrine, gathering His disciples, achieving miracles, submitting Himself to persecution and death and, at last, crying from upon the cross: "All is consumed", signifying that the goal for which He came in the world was fulfilled.

The cross is the summit of Christ's love, the supreme criterion of love "There is not greater love than to give his life for his friends", He said.

Yet all these events would be worthless and without any consequence absent the last stage of Christ's earthly life: the resurrection. Upon that fact was founded His doctrine, and from that miracle it was receiving its strength and credibility.

The apostle Paul very clearly and strongly explains this reality: what would serve to our faith, and upon what our hope would be founded if Christ was not raised?

Indeed if Christ were not raised, His deeds, His words, His entire life would be reduced to nothing, for He Himself had put His resurrection as a condition and guarantee of the truth of His word. So many times He had declared that he would suffer and die, but rise again, and do this with His own will and power.

For without the Resurrection, Paul argues that our faith is sterile, our preaching deprived of meaning, and that we would have misled ourselves and others if Christ has not been raised from the dead. In other words, as he would say to his followers: "If you don't agree that Christ has raised, it is better that you renounce to be Christians".

To be consistent with ourselves, we must ask this question: Is it logical to believe in God and refuse the Resurrection of Christ? That would be absurd, and we would contradict ourselves, doubting that the One who had created from nothing all living beings, is able to pull them also from death to life.

Yet there are men who in these more educated times become more critical and demand scientific proofs of the Resurrection of Christ, otherwise it will remain for them an enigma and classified as a legend.

Christian faith never professed nor taught that Resurrection is a part of the scientific domain. Church proclaims faith, not science. Yet her authority is never diminished for that, nor the fundamentals of her teaching are shaken.

Indeed, faith and science are values belonging to different fields and levels. While science establishes its definitions on material, tangible elements, faith appeals to the witness of credible and trustworthy beings. Nobody can deny the conclusions of science when they are built on serious arguments, while it is always possible to refuse the truths of faith when the honesty and veracity of those who proclaim them is arguable.

We do not earn any merit by believing in the data of science, because, willing or not, we are obliged to accept them because of furnished proofs; however, trusting to faith's proposals, we do earn

merit, for we freely acknowledge that the one who is teaching them is honest and truth-speaking; by believing in the articles of faith, we deserve the teacher's friendship and, in spiritual field, the proper reward.

Concerning the Resurrection of Christ, who can testify to its veracity?

Christ himself, first. Because He said several times that He will be betrayed, condemned to death and crucified, but He also promised will rise from dead after three days.

Is this enough to push us to believe?

Yes, but conditionally; it depends on the faith: if we believe in the divinity of Christ, there is no other issue than to believe also in His resurrection. A non-believer cannot accept the Resurrection.

Then follows the witness of the apostles. They did it not by words only, but by shedding their blood. Who sacrifices his life for the sake of a hallucination or an illusory event? What were they earning by witnessing for the resurrection of a dead, especially in front of people full of hatred, who were looking for an opportunity to persecute them and get rid of them? Yes, they have been rewarded, but how? By the supreme gift of love, the reward of martyrdom.

The Resurrection, the feast of triumph, is also the feast of hope. The hope that inspires us with the certitude that we also will be raised. This is an article of faith. A faith that gives us the conviction that Christ not only gave back life to Himself, but grants us the assurance of our own resurrection. Is there any more comforting and consoling vision than this, in order to make this transitory and illusory existence more significant and deserving to be lived?

Yes, if He has risen, we also will raise with Him!

+ *Manuel Batakian, eparch*